ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ՈՒՇԱԳՐԱՎ ՀՈԴՎԱԾԱՇԱՐԸ

Հայագիտության կարկառուն դեմքերից Մանուկ Աբեղյանի գիտական հսկայածավալ ժառանգության հիմնական մասն ամփոփված է ութ հատորում: Սակայն կարևորագույն մի շարք գործեր դուրս են մնացել դրանցից, այդ թվում՝ ժամանակի պարբերական մամուլում սփռված գեղարվեստական երկեր, մատենախոսություններ, թարգմանություններ, հրապարակախոսական հոդվածներ, նամակագրություն, որոնք անծանոթ են գիտական հանրությանը: Այս շարքում առանձնակի տեղ է գրավում Մ. Աբեղյանի հրապարակախոսական ժառանգությունը, որում արտացոլված են նրա հայրենասիրությունը, լավատեսությունը, քաղաքական հեռատեսությունը և քաղաքացիական ազնվությունը, հարազատ ժողովրդի իղձերն ու ակնկալիքները: Ըստ այդմ՝ աչքի է զարնում «Մանուկ Հայաստանը» խոսուն վերնագրով հոդվածաշարը [«Ժողովրդի ձայն» (Թիֆլիս), 21, 28 սեպտեմբերի, 2 հոկտեմբերի 1918 թ.]՝ նվիրված հայոց պետականության վերականգնմանը և այդ առնչությամբ ժամանակի մտավորականության պահվածքին*:

Հոդվածաշարի 1-ին և 2-րդ մասերը հրապարակել ենք «Գիտություն» թերթի այս տարվա մայիսյան համարում: Հաշվի առնելով վավերագրի ոչ միայն պատմական, այլև արդիական հնչեղությունը՝ հոդվածաշարն ընթերցողի ուշադրությանն ենք ներկայացնում ամբողջովին:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

ՄԱՆՈՒԿ ՀԱՅԱՍՏԱՆԸ

I

Մանուկ Հայաստանը, մեր բանաստեղծների և ազգի երազած մանուկը, ծնվեց ոչ թե բուռն ոգևորության շրջանում, այլ, դժբախտաբար, ճիշտ այն րոպեին, երբ Կովկասի մայրաքաղաքում կուտակված մեր ինտելիգենցիան իր կատարյալ սնանկությունը ցույց տվավ:

Երբեք չի մոռացվիլ և չպիտի մոռացվի, թե ինչպես ժողովրդի այդ ուղեղը, սառնասրտությունը կորցրած, խուճապի էր ենթարկված մայիսի վերջերին և հունիսի սկզբներին, մինչ հասարակ զինվորները, սակավաթիվ սպաների առաջնորդությամբ,

---

* *Նկատենք, որ հոդվածաշարի վերնագրում «Հայաստան» բառը 1-ին և 3-րդ մասերում տպագրվել է առանց «ը»-ի՝ «Մանուկ Հայաստան», իսկ 2-րդում՝ «ը»-ով՝ «Մանուկ Հայաստանը»: Այն վերջին ձևով է արտացոլված նաև Մ. Աբեղյանի աշխատությունների մատենագիտական ցանկում (տե՛ս Մանուկ Խաչատուրի Աբեղյան: Ներածականը Ա. Տ. Ղանալանյանի: Բիբլիոգրաֆիան կազմել է Ռ. Ա. Բաբաջանյանը, Երևան, 1963, էջ 42): Մենք օգտագործել ենք վերնագրի այս տարբերակը:*

Սարդարապատում, Բաշ-Ապարանում և Փամբակի ձորում, կյանքի և մահվան վճռական կռիվն էին մղում թշնամու դեմ: Նա, այդ ինտելիգենցիան, Թիֆլիսում գլուխը կորցրած էր բառի իսկական նշանակությամբ. նա թողնում, լքում էր ամեն ինչ, և, վեհերոտ ու վախկոտ, բռնում Վլադիկավկազի ճանապարհը: Մարդիկ մի քանի ժամում որոշում էին և առանց որևէ դժվարության ոտքով գիշերով ճանապարհ էին ընկնում ամբոխի հետ ու գնում:

– Ո՞ւր եք գնում, ինչո՞ւ եք փախչում. մնացեք, եղբայր, անգետ ամբոխին վատ օրինակ մի՛ լինեք ...

– Դժվար է խորհուրդ տալն այժմ ուրիշներին, թե պե՞տք է փախչել, թե ոչ: Ամեն մարդ այժմ իր գլխի տերն է, ինքը գիտե: Միայն չպիտի մոռանալ, որ եթե գան, ամենից առաջ մեզ կհասնի: Նրանք մեր ցուցակները կունենան անպատճառ…

Այսպես էին պատասխանում նույնիսկ քաջասիրտ ազգային գործիչները, ազգի նահատակները, ու ճանապարհ էին ընկնում կամ պատրաստվում փախչելու, վախենալով, թե տաճիկները առաջուց նրանց ցուցակները պահած կունենան:

Բարեբախտաբար ամենքը ոտով գնալ չէին կարող, ամենքն էլ ընտանիքից ազատ չէին, ամենքն էլ չէին կարող թողնել կին ու երեխա, ծերացած հայր ու մայր ու միայն իրենց գլուխն ազատելու վրա մտածել: Բարեբախտաբար կային և ավելի սառնասիրտները, իրենց դիրքից ամաչողներ, որոնք իրենք մնացին և միայն իրենց կանանց ու երեխաներին ձգեցին սար ու ձոր, մտածելով, թե իրենք տղամարդ են, վերջին րոպեին էլ կփախչեն:

Բարեբախտաբար այդ տագնապն ու խուճապը շուտ նստեց, շուտով գերմանական դրոշակը ծածանվեց Թիֆլիսում, տաճիկների Թիֆլիս խուժելու վտանգն անցավ, ու շատերը, որ պատրաստվում էին փախչելու, այլևս տեղից չշարժվեցին:

Պատահում ես փողոցում մեկին.

– Վա՜հ, դու այստե՞ղ ես: Հապա ես լսեցի, թե Վլադիկավկազ ես թռել:

– Ո՞վ է ասում: Ես երբեք էլ չեմ մտածել այդ մասին,– ամոթից թաքցնում է մեր ինտելիգենտն իր փախստի մտադրությունը և խոստովանում է միայն այն ժամանակ, երբ ասում ես, թե նա ո՛ւմ հետ ի՛նչ պատրաստություններ է տեսել փախչելու համար:

Այժմ արդեն մեկ-մեկ գլխիկոր վերադառնում են փախչողները:

– Է՛հ, բարով ես եկել, փախչող եղբայր:

– Ես ամենևին էլ չեմ փախել, ես միայն գնացել էի այս ինչ տեղը հանգստանալու:

Ու դեռ ասում ու նեղանում ենք, թե ինչու Ջավախքի ժողովուրդն իր տեղում չմնաց, թե ինչու շիրակեցին իրեն ձգեց սար ու ձոր և կամ Սարդարապատի շրջանի հայերը թափվեցին Էջմիածին ու Երևան ... Եթե Թիֆլիսում նստող դասալիք ու ազգային գործիչ երիտասարդներն այսպես էին, ի՞նչ պիտի աներ խեղճ ու կրակ գյուղացին:

Ու դեռ ասում ենք, թե ինչու Մանուկ Հայաստանը այդպես փոքր, շատ փոքր, այդպես հիվանդոտ մանուկ ծնվեց:

II

Երեք ամիս առաջ տեղի ունեցած ամոթալի խուճապը Թիֆլիսում իրեն կարգին, դա մի արատ է, որ երկար կմնա ինտելիգենտի ճակատին. բայց արատը միայն այդ անասնական երկյուղը չէ, այլ ավելի այն, որ հենց այն ժամանակ, երբ ծնվեց Մանուկ Հայաստանը, ստեղծվեց նրա մասին մի այլանդակ մտածողության եղանակ, մտքի մի կործանարար տագնապ, որը մինչև այժմ դժբախտաբար չի վերանում:

Երբ հունիսի սկիզբներում հայտնի դարձան Բաթումի դաշնադրության պայմանները և թե ի՛նչ սահմաններով կազմվեց Հայաստանի Հասարակապետությունը, կարծես սառը ջուր մաղվեց մեր ազգասեր ինտելիգենցիայի գլխին: Փոխանակ ուրախ լինելու, որ ստեղծվում է դարերով երազած անկախությունը, անկախ Հայաստանը, թեպետ խիստ նեղ սահմաններով, և նրա գոյությունը ճանաչում է հենց այն թշնամին, որի դեմ այդ անկախության համար կռիվ էր մղել հայ ժողովուրդը դարեր շարունակ,– փոխանակ ուրախ լինելու, մեր խուճապի ենթակա ինտելիգենցիան ընկավ մի չտեսնված, չլսված լքված դրության մեջ: Նա պատրաստ էր նույնիսկ ձեռք քաշելու այդ Հայաստանից:

– Դա Հայաստան չէ,– մտածեց ամենից խորագետ ինտելիգենտը, որ կոչված էր ազգի փրկության գլուխ լինելու և նրա համար աշխատելու. և ահա ստեղծեց նա Արարատյան Հասարակապետություն հորջորջումը, որ մինչև այժմ էլ սիրով գործ են ածում վրացիները: Բայց մեր թշնամին մեզնից ավելի խելոք էր մտածել, նա Հայաստանի Հասարակապետության հետ էր դաշինք կապել: Նա Կովկասում Հայաստան էր ստեղծում:

– Ավելի լավ չի՞ լինիլ հրաժարվենք այդպիսի անկախությունից և միանանք Ադրբեջանի կամ Վրաստանի հետ,– ասում էր մի ուրիշը, առանց մտածելու, որ մի օր առաջ այդ երեք երկիրները միացած էին և անկախ Հայաստան առաջ եկավ նրա համար, որ միացած դրության մեջ մնալն անհնարին դարձավ:

Կային նույնիսկ, այո՛, կային ասողներ, թե թող տաճիկներն այն փոքրիկ մասին էլ տիրեն:

Ինչի՞ համար էր մտքի այս այլանդակությունը: — Որովհետև Հայաստանը շատ փոքր երկիր է, աղքատ է, չի կարող կերակրել իր բնակիչներին, չի կարելի այնտեղ ճարտարարվեստ զարգացնել. նա բուրդ չունի, բամբակ չունի... Մեկն ասում է, ի՞նչ պետություն, որ անտառներ չունի, մյուսը թե՝ ի՞նչ պետություն, որ հանքեր չունի: Մի երրորդը հարցնում է, թե՝ մի՞թե կարելի է այժմյան ժամանակում երևակայել մի տերություն, առանց ծովի, երեք-չորս տերության մեջ խեղդված. մի չորրորդը թե՝ ի՞նչ ֆինանսներ պիտի ունենա այդպիսի փոքր պետությունը. մի հինգերորդը թե՝ ինչի՞ է պետք այդպիսի փոքր տերությունը, որ չի կարող նույնիսկ փող կտրել. մի՞թե առանց սեփական դրամի կարող է անկախ երկիր լինել. մի վեցերորդը թե՝ Երևանում նույնիսկ հարկավոր շենքերն էլ չկան ...

Եվ այսպես շատ բաներ էր ասում և դեռ ասում է մեր ինտելիգենտը և շատ պակասություններ համար պարսավում նորածին Մանուկ Հայաստանին:

Դժվար, շատ դժվար էր այդ խուճապի ենթակա ինտելիգենտներին հասկացնել, թե մի փոքրիկ պետության համար առժամանակ և երկար ժամանակ Երևանի շենքերն էլ բավական են. թե աշխարհում եղել են և կան անկախ տերություններ, որ սեփական դրամ չունեն. թե իհարկե, փոքր տերությունը փոքր էլ ֆինանսներ կունենա և անշուշտ սկզբի շրջանում, քանի որ ամեն ինչ տակնուվրա է, ֆինանսական նեղություն կկրե. թե շատ լավ կլիներ, որ Հայաստանը ծով էլ ունենար, բայց հայերը միշտ էլ ծով չեն ունեցել, բացի Կիլիկյան շրջանից. ուրեմն դրա համար պիտի հրաժարվե՞նք Հայաստանի անկախությունից. թե փոքրիկ Հայաստանը հարուստ է հանքերով, բայց դրանք անմշակ են. թե նա իրեն համար բավարար չափով անտառներ էլ ունի, բուրդ էլ, բամբակ էլ, պտուղ էլ, հաց էլ և ուրիշ շատ բարիքներ էլ: Եվ թե՝ եթե լավ մշակվի և բնության օժտած բոլոր բարիքներից լավ օգտվի, շատ ավելի մեծ թվով ժողովուրդ կկերակրի, քան այժմ: Թե ամենայն ինչ կախված է մեր աշխատանքից ու շնորհքից: Եվ վերջապես փոքր է, աղքատ է, բայց մերն է, մեր սեփականը. չեղածից, ոչնչից լավ է:

Մի՞թե այսպիսի տարրական բաների համար օրերով, շաբաթներով ու ամիսներով խոսելն ու վիճելը և Հայաստանի փոքրության և աղքատության համար՝ նրանից հրաժարվելու այլանդակ միտքը ավելի ողբալի չէ՞ր և չէ՞ հայության համար, քան Վլադիկավկազի ճանապարհը:

Այո՛, մեզ թողել են միայն մի փոքրիկ լեռնային երկիր, բայց մի՞թե պետք է մենք դրանից ձեռք քաշելու համար մտածեինք, թե՞ պետք է իսկույն այդ լեռներին տիրանայինք և աշխատեինք, որ եթե ոչ այսօր, վաղը, մյուս օր մնացածն էլ ձեռք բերենք: Այո՛, մեր հարևան թուրքերն ու վրացիներն էլ՝ պահանջում են մեզանից ամբողջ գավառներ, բայց մի՞թե մենք դրա համար պիտի վիատեինք, թե՞ պետք է ուժերս լարած կռվեինք և կռվենք դրա դեմ և թույլ չտանք, որ անիրավությունն այսքան մեծանա: Ճիշտ է, եթե մենք առաջ երկու տեղ, Տաճկաստանում ու Ռուսաստանում ունեինք ցավեր հոգալու, հիմա ունենք չորս-հինգ տեղ. բայց դրա համար խելացնորության մեջ չպիտի ընկնենք:

Այո՛, այս և ուրիշ շատ ծանր պայմանները շատ են ճնշում, ընկճում մեզ. բայց մենք այժմ ունենք մի գոհար, որ դարեր շարունակ չենք ունեցել մեր տառապանքների մեջ: Դա երկնքի ցավերով ծնված Մանուկ Հայաստանն է, մեր և մեր հայրերի ու նախնիքների իղձն ու աղոթքը, մեր հուսո աստղը, որ պիտի մեզ թևարկի և մեր ուժն ու աշխատանքի եռանդը բազմապատկի:

Այդ մանուկը դեռ փոքր է, տկար է, թուլակազմ, ենթակա հազար ու մի փորձանքի. բայց ամեն բան կախված է մեր շնորհքից, խոհեմությունից ու ջանքից: Խնամք է միայն պետք նրա համար, և նա կապրի, կզորանա ու կմեծանա:

Բայց արդյոք տանո՞ւմ ենք մենք այդ խնամքը, թե՞ մենք շարունակում ենք մտքի այլանդակ խուճապը:

III

Շատ ուշ ճանապարհի ընկավ Ազգային Խորհուրդն ու Հայոց Կառավարությունը դեպի Երևան: Բայց և այնպես բավական ժամանակ է, որ նա իր տեղումն է:

Երեկ մի ընկերոջ հետ փողոցում հանդիպեցի ու ծանոթացա մի ինտելիգենտ պարոնի, որ նոր էր եկել Երևանից: Բնականաբար առաջին խոսքն եղավ հարցնել այնտեղի դրությունից:

– Ի՞նչ հասարակապետություն, ի՞նչ բան այդպիսի նեղ սահմաններով, – պատասխանեց նա դժգոհ ու հոռետես:

– Բայց չէ՞ որ կան և ուրիշ նման փոքր պետություններ, և ապրում են, և մենք էլ կապրենք:

– Այո՛, բայց նրանք և մենք մեկ չենք. ոչ կարգ կա այնտեղ, ոչ իշխանություն:

– Բայց չէ՞ որ մեր պետությունը դեռ նոր է ծնվել պատերազմի ու քայքայման ամենադժբախտ շրջանում. այն բարեկարգ փոքր պետություններն էլ, երևի, նոր ծնվելիս շատ լավ վիճակի մեջ չեն եղել:

– Այո՛, բայց մերը տաճկի տված մի հասարակապետություն է, մի բան որ ինքը տաճիկը չունի,– գլուխը թոթվելով հայտնեց Երևանից եկողը:

– Ինչո՞ւ է տաճիկը տվել մեզ մեր հասարակապետությունը, քանի որ մենք ենք դրա համար աշխատել, արյուն թափել և ձեռք բերել: Տաճիկն ստիպված է եղել ընդունելու մեր գոյությունը, և եթե մենք խելոք լինենք, մեր հասարակապետությունը ապահովված կլինի և ապագայում կբարգավաճի:

– Ո՞ւմ ձեռով, ինչպե՞ս. Երևանում ինտելիգենտներ քիչ կան:

– Հապա Խորհրդարա՞նը...

– Ի՞նչ Խորհրդարան: Նրա անդամները դարձրել են այդ մի ցիրկ, ուր իրենց խեղկատակություններն են անում:

Այո՛, այսպես, հենց այսպես, ասաց մեր խոսակիցը:

– Ի՞նչ եք ասում. մի՞թե սրտացավ աշխատողներ չկան: Այդ ո՞ր կուսակցություններն այդպես:

– Ավելի սոցիալ-դեմոկրատներն ու էսէռները:

– Հապա իշխող կուսակցությո՞ւնը...

– Դաշնակցականներն ուզում են մի բան անել, բայց նրանք էլ մյուսներից հետ չեն մնում:

– Ինչպե՞ս է կառավարությունը:

– Շատ թույլ, ոչ մի ազդեցություն չունի: Նրա գլուխը թեպետ ընդունակ, հանճարեղ (նա այս բառը գործածեց), բայց հոգնած մի մարդ է:

– Մի՞թե շատ բան արավ, որ այդպես շուտ հոգնեց:

– Նա հենց սկզբից հոգնած էր. հասակավոր է:

Իմ խոսակիցը, դժբախտաբար, մի բան էլ ասաց, թե ժողովուրդը շատ դժգոհ է և cour d'e'tat է պատրաստվում...

Այդ խոսքի վրա՝ նա ներողություն խնդրեց թե շտապում է և հեռացավ:

Ես մնացի սառած: Իմ վիշտն ավելի մեծ եղավ, երբ իմացա, թե Երևանից եկող այդ պարոնը ո՛վ է: Ծանոթանալիս ազգանունը լավ չէի լսել: Նա մեր հայտնի գործիչներից է, որի մասին ես գիտեի: Նա Հայաստանի կառավարությունից հենց նոր մի կարևոր պաշտոն էր ստացել:

Իմ վիշտը փոխվեց զայրույթի: Մարդիկ, որ հավատ չունեն գործի համար, ինչպե՞ս են ձեռք մեկնում այդպիսի պաշտոնների: Մարդիկ, որ այդպիսի հուսահատ խուճապական դրության մեջ են, հոգեպես այդպես ճնշված են, մի՞թե կարող են Հայաստանի համար մի օգտակար գործ կատարել: Չէ՞ որ հավատն է շարժում սարերը տեղից:

– Բայց նա շատ եռանդուն է և մեր ամենից լավ աշխատողներից է: Դուք չեք ճանաչում նրան,– մխիթարեց ինձ իմ ընկերը:

– Երանի թե ...

Ահա մեր ինտելիգենցիան, Մանուկ Հայաստանի համար աշխատող ինտելիգենցիան: Դրանք ցանկանում են, որ մի քառասուն օրվա մեջ Երևանում հրաշքներ գործվեին, և երբ այդ հրաշքները չեն գտնում, ընկնում են հոռետեսության տագնապի մեջ:

Դժբախտ Մանուկ Հայաստան, քեզ հարկավոր <է> և պահել ու կերակրել, դու հաց ես ուզում, բայց քեզ քար են տալիս: Քեզ հարկավոր է մայրական խնամք ու պաշտպանություն ամեն հրից ու սրից, ամեն սարից ու քարից, բայց քո խնամատարները «խեղկատակություններ» անելով են պարապում:

Ճի՞շտ է այս: Ճի՞շտ է, որ անպատասխանատու կուսակցությունները չեն լծվում գործի և միայն խոսելով են զբաղված ու Խորհրդարանը շինել են ագիտացիայի բեմ: Այսպիսի լուրեր են հասնում Երևանից:

Եթե ճիշտ է, զգու՛յշ կացեք, պարոննե՛ր: Թեպետ ձեզ ժողովուրդը չէ ընտրել, բայց այն ժողովուրդը, որ դարեր շարունակ երկնել է մի Մանուկ Հայաստան ծնելու համար, նա ձեզ մի օր դատարանի ու պատասխանի կկանչի և այդ կանի ոչ իբրև կուսակցության ներկայացուցիչների, այլ իբրև անհատների, որոնք գրեթե պատահմունքով ընկել են Հայաստանի Խորհրդարանի մեջ, բայց վարում են անխորհուրդ կերպով: